

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

5.1. ՄԱԿ-ի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմը

(Վիճակագրական հանձնաժողովի 30-րդ նստաշրջան, 01.03.1999թ. դրությամբ)

ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված, ինչպես նաև Միջազգային վիճակագրական ծրագրերի և ներդաշնակեցման Աշխատանքային խմբի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմում ընդգրկված 15 ցուցանիշներից 33 Ազգային վիճակագրական ծառայությունը 2002թ. հունվար-դեկտեմբերին տեղեկատվություն է ներկայացնում հետևյալ 9 ցուցանիշների վերաբերյալ.

1.Մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի

(հազ.մարդ)

	Ամբողջ բնակչությունը	կին	տղամարդ
2001թ. մարդահամարի արդյունքներով	3213.1	1671.1	1542.0
2002թ. հունվարի 1-ի դրությամբ ¹	3213.0	1670.8	1542.2
2003թ. հունվարի 1-ի դրությամբ	3210.8	1669.6	1541.2

2.Կյանքի սպասվելիք տևողությունը հաշվարկված ծննդից՝ ըստ սեռի 2000 և 2001թ.թ.²

(տարի)

	Ամբողջ բնակչությունը	կին	տղամարդ
2000թ.	73.4	75.7	70.9
2001թ.	73.5	75.9	71.0

3. Մանկամահացությունն ըստ սեռի (մինչև 1 տարեկան)

(1000 կենդանածինների հաշվով)

	Ընդամենը	աղջիկներ	տղաներ
2000թ. հունվար-դեկտեմբեր	15.6	13.6	17.4
2001թ. հունվար-դեկտեմբեր	15.4	12.3	17.5
2002թ. հունվար-դեկտեմբեր	13.4	10.8	15.6

4.Երեխաների մահացությունն ըստ սեռի (մինչև 5 տարեկան)

(1000 կենդանածինների հաշվով)

	Ընդամենը	աղջիկներ	տղաներ
2000թ. հունվար-դեկտեմբեր	19.1	17.0	21.1
2001թ. հունվար-դեկտեմբեր	18.8	15.2	21.9
2002թ. հունվար-դեկտեմբեր	15.9	12.9	18.4

5.Մայրական մահացության գործակիցը 100000 կենդանածնի հաշվով 2000թ. կազմել է 52.7 (18 դեպք), 2001թ.՝ 18.8 (6 դեպք), իսկ 2002թ. հունվար-դեկտեմբերին՝ 12.4 (4 դեպք):

7. Պարտադիր ուսման տևողությունը հանրակրթական դպրոցներում կազմել է 8 տարի:

¹ 33 2001թ. մարդահամարի տնյալների հիմքով:

² Կյանքի սպասվելիք տևողության հաշվարկի համար հիմք են հանդիսանում տվյալ տարվա մահացության տարիքային գործակիցները, ընդ որում հիմնականը՝ մինչև 1 տարեկան հասակում մահացության մակարդակն է:

12. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2002թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 357282.5 դրամ կամ 623.1 ԱՄՆ դոլար, իսկ 2001թ. հունվար-դեկտեմբերին՝ այն կազմել է 309241.1 դրամ կամ 557.1 ԱՄՆ դոլար:

14. Գործազրկության մակարդակը 2002թ. դեկտեմբերին կազմել է 9.1% և նախորդ տարվա նկատմամբ նվազել է 0.7%-ով: Ընդ որում, կանանց գործազրկության մակարդակը 2002թ. դեկտեմբերին կազմել է 12.8% և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 0.7%-ով, իսկ տղամարդկանց գործազրկության մակարդակը կազմել է 5.7% և նվազել է 0.7%-ով:

15. 2002թ. հունվար-դեկտեմբերին **տնտեսության մեջ զբաղված է եղել** ՀՀ ողջ բնակչության 33.7 %-ը, այդ թվում կանայք՝ 30.2 %-ը, տղամարդիկ՝ 37.5%-ը: